ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/97

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 04.10.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 08.10.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Երվադա» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/33» հրատապ բաց մրցույթ

Գնման առարկան՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նորաշեն, Արծվաբերդ, Վերին Ծաղկավան, Վարագավան, Տավուշ բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/33» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել հանձնաժողովի 10.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունված բոլոր որոշումները,
2. ընդունել որոշում՝ գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ անցկացնելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ «Երվադա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, ԱրինԲերդի 3/4
հեռ: (+374) 91111134
էլ.փոստ՝ ervada@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, Լևոն Բեկի 5
Հեռ՝ (077) 44-49-41
էլհասցե՝ nellyvanesyan@mail.ru

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նորաշեն, Արծվաբերդ, Վերին Ծաղկավան, Վարագավան, Տավուշ բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/33 ծածկագրովիրատապ բաց մրցույթ

Բողոք

- <u>Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.</u>

✓ ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի (այսուհետ նաև՝ Պատվիրատու)կողմից ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Նորաշեն, Արծվաբերդ, Վերին Ծաղկավան, Վարագավան, Տավուշ բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՝՝ԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/33՝՝ծածկագրովիրատապ բաց մրցույթ(այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր):

✓ Մրցույթիհրավերի(կցվում է) 1.1 կետիհամաձայն՝հրավերովնախատեսված աշխատանքների կատարմանհամարպահանջվումենհետևյալիցենզիաները.

Քաղաքաշինությանբնագավառումշինարարությանիրականացում (բացառությամբշինարարությանթույլտվությունչպահանջվողաշխատանքների) ըստհետևյալոլորտի՝

Չափաբաժիններիհամարները	*Պահանջվողլիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	շինարարական
2	էներգետիկ
3	հիդրոտեխնիկական

✓ Մրցույթի հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերով սահմանված վարկունակության վարկանիշ ունենալու մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

3) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.

4) շինարարական աշխատանքների գնման դեպքում՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ

պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները.

5) ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է ենթակապալի միջոցով:

6) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

- համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.
- եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին.

✓ Մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 1 արձանագրության (կցվում է) 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցների ներկայացրած հայտերում կան անհամապատասխանություններ: <u>«Երվադա» ՍՊԸ-ի մոտ բացահայտում է հայտի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը:</u>

✓ Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց «Երվադա» ՍՊԸ-ին տալ մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունները մերժելու համար:

✓ Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ Մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց «Երվադա» ՍՊԸ-ին տալ մեկ աշխատանքային օր՝ հայտի ապահովման բնօրինակները Բերդի համայնքապետարան ներկայացնելու համար:

✓ Մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) 2-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ ԲՀ-ՀԲՄԱԾՁԲ-21/33 ծածկագրովհրատապ բաց մրցույթի <u>բոլոր մասնակիցները մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել են համապատասխան ուղղումները և ներկայացրել հայտում բացակայող փաստաթղթերը</u>, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների 01.10.2021թ. ժամը 12:00-ին:

✓ Մրցույթի գնահատող հանձնաժողովի 01.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության (կցվում է) համաձայն՝ հաշվի առնելով, որ 01.10.2021թ. հրավիրված բանակցություններին ներկա էին «Էդուարդ Շին» ՍՊԸ-ն, «Շահարտ» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն, ուստիգնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Բանակցությունների արդյունքում Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «Էդուարդ Շին» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «Շահարտ» ՍՊԸ-ին:

2. **«Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ բանակցությունները սկսելուց հետո լիցենզիան ուշ ծանուցելու համար:**

- *<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով **մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:**

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի *<u>գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:</u>*

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպեսնարՀրավերի 8.2 կետիհամաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: <u>Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև **գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:**

Կարգի 41-րդ կետի եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, **իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:** Եթե անհամապատասխանություն նարձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը:**Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:**

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է **արձանագրված անհամապատասխանությունը**, ապանրահայտրգնահատվումէբավարար:Հակառակդեպքումտվյալմասնակցիհայտրգնահատվումէանբավարարեմերժվում է, ներառյալեթեմասնակիցըսույնկարգի 32-րդկետի 1-ինմասի «և» պարբերությամբսահմանվածժամկետումչիներկայացնումհայտիապահովմանբնօրինակը, իսկընտրվածմասնակիցէճանաչվումհաջորդողտեղըզբաղեցրածմասնակիցը:

Ինչպես արդեն նշել ենք, Մրցույթի հրավերով նախատեսվել է, որհրավերովնախատեսված աշխատանքների կատարմանհամարպահանջվումենհետևյալիցենզիաները.

Քաղաքաշինությանբնագավառումշինարարությանիրականացում (բացառությամբշինարարությանթույլտվությունչպահանջվողաշխատանքների) ըստհետևյալոլորտի՝

Չափաբաժիններիհամարները	*Պահանջվողլիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	շինարարական
2	էներգետիկ
3	հիդրոտեխնիկական

Միևնույնժամանակ, Մրցույթի հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակցիկողմիցհայտովներկայացրածփաստաթղթերիցանկումնշվածչէլիցենզիան՝ որպեսհայտովներկայացվելիքփաստաթուղթ:

Ինչպեսարդենշելենք, Մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 1 արձանագրության 3-րդ կետովհանձնաժողովը«Երվադա» ՍՊԸ-իներկայացրած հայտումարձանագրել է անհամապատասխանություն՝ մասնավորապեսարձանագրել է, որ ՍՊԸ-ի հայտում բացահայտում է հայտի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը:Նույնարձանագրությամբորոշվել է «Երվադա» ՍՊԸ-ին տալ մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունները մերժելու համար: Ինչպես նաև որոշվել «Երվադա» ՍՊԸ-ին տալ մեկ աշխատանքային օր՝ հայտի ապահովման ինօրինակները Բերդի համայնքապետարան ներկայացնելու համար:

Բողոքներ բնող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ արձանագրության մեջ խոսք անգամ չկա «Երվադա» ՍՊԸ-ի հայտում լիցենզիայի բացակայության մասին (վերոհիշյալ փաստաթղթի բացակայությունը չի նշվել որպես անհամապատասխանություն) կամ վերջինիս վրա չի դրվել պարտականության ներկայացնել լիցենզիա:

ԱյնուհետևՄրցույթի գնահատող հանձնաժողովի 29.09.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) 2-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ ԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/33 ծածկագրովհրատապ բաց մրցույթի <u>բոլոր մասնակիցները մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել են համապատասխան ուղղումները և ներկայացրել հայտում բացակայող փաստաթղթերը</u>, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների 01.10.2021թ. ժամը 12:00-ին:

Փաստորենշտկումիցհետոգնահատողհանձնաժողովրարձանագրել է, որև «Երվադա» ՍՊԸ-նկատարել է պահանջվածշտկումը, վերջինիսհայտըգնահատել է հրավերիպահանջներինբավարարող և մյուսմասնակիցներիհետԲողոքաբերինհրավիրելենբանակցությունների:

Նմանպարագայումավելի, բանանհասկանալի է, եթեչասենքտարօրինակ, որ 01.10.2021թ.ժամը 12:00-ին հրավիրվածբանակցություններիժամանակգնահատողհանձնաժողովըթույլչիտվել«Երվադա» ՍՊԸ-ինմասնակցելուտվյալբանակցություններին, ավելին, անհիմնորոշել է մերժել«Երվադա» ՍՊԸ-ի հայտը՝ բանակցությունները սկսելուց հետո լիցենզիան ուշ ծանուցելու համար:

ԸստԲողոքաբերի, այստեսառկաենառնվազն 3 հիմք՝ նմանորոշումըանօրինական, գնումներիմասին ՀՀ օրենսդրությանրհակասողդիտարկելուհամար.

1. Նախամենակարևորը, ՄրցույթիգնահատողհանձնաժողովըԿարգի 41-րդ կետովսահմանվածկարգովարձանագրել է կոնկրետերկուանհամապատասխանություն՝ հայտիապահովման և ծավալաթերթ-նախահաշվիմասով, որոնքպետք է շտկվեինԲողոքաբերիկողմից: Թից 2 արձանագրությամբգնահատողհանձնաժողովըհստակարձանագրել է, որպահանջվածշտկումըկատարվել է, Բողոքաբերիհայտըգնահատվել է հրավերիպահանջներինբավարարող, և վերջինսհրավիրվել է բանակցություններինմասնակցելուհամար: Եվնմանպարագայումանհիմն է «Երվադա» ՍՊԸ-ի հայտի մերժումը՝ լիցենզիան ուշ ծանուցելու/ներկայացնելու համար, բանիորլիցենզիայիմասովշտկմանպահանջառկաչիեղել:

2. Այստեղինարկմանտեղիք է տալիսնաևայնհարցը, թեարդյոքմասնակիցըպարտավորէրհայտովներկայացնելլիցենզիա՝ հաշվիառնելով, որհայտովներկայացրածփաստաթղթերիցանկումմանփաստաթուղթներկայացնելուպահանջ ոկաչէ:

3. Եվվերջապեսավելի, բանանհասկանալի է գնահատողհանձնաժողովիթիվ 3 արձանագրության 2-րդ կետիբովանդակությունը, ընդհանրապեսինչ է նշանակում ՝՝բանակցությունները սկսելուց հետո լիցենզիան ուշ ծանուցելու համար՝՝:Գտնումենք, որնմանարտահայտությունըընդհանրապեսկարիքունիբովանդայինբացատրության, այնընկալելիչէ:

Նմանպայմաններումգտնումենք, որՄրցույթիգնահատողհանձնաժողովըկպտորենխախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի26-րդ կետի 9-րդ ենթակետի, 41-րդ և 42-րդ կետի պահանջները, որն էլ իր հերթին հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ հոդվածի 1-ին մասիպահանջներիխախտմանը:

Գտնում ենք, որ «Երվադա» ՍՊԸ-ի խախտված իրավունքը հնարավոր կլինի վերականգնել միայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացվածորոշումներըդադարեցնելու և Օրենքի պահանջներին համապատասխանող գների շուրջ միաժամանակ նոր բանակցություններ անցկացնելու դեպքում, որին հնարավարություն կունենա մասնակցել «Երվադա» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելովվերոգրյալից՝ բողոքներքննողանձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտավորեցնել "ԲՀ-ՀԲՄԱԾՁԲ-21/33" ծածկագրովհրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.01.2021թ. 2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունված բոլոր որոշումները:

2. Պարտավորեցնել "ԲՀ-ՀԲՄԱԾՁԲ-21/33" ծածկագրովհրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ անցկացնելու վերաբերյալ:

Կիցներկայացվում է՝

1. Պետականտուրքիվճարմանանդորրագիրը:
2. «Երվադա» ՍՊԸ -ի տնօրենՀ.Մխեյանիանձնագրիատատատողփաստաթղթիպատճեն:
3. ԲՀ-ՀԲՄԱԾՁԲ-21/33» ծածկագրով հրատապբացմրցույթիհրավերը:
4. «ԲՀ-ՀԲՄԱԾՁԲ-21/33» ծածկագրով հրատապբացմրցույթի գնահատող հանձնաժողովի տեղի ունեցած նիստերի թիվ 1, 2, 3 արձանագրություններիպատճենները:

Հարգանքով՝

«Երվադա» ՍՊԸ–ի տնօրեն ______________ Հ. Մխեյան

05.10.2021թ.